

ԿԱՆՈՆՆԵՐ
«ԱՅՐԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

Պատասխանատու ստորաբաժանում	Քարտային գործառնությունների վարչություն
Կազմեց	Քարտային գործառնությունների վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	09.12.20
Տարածում	«Այրի Բանկ» ՓԲԸ բոլոր ստորաբաժանումներին «Այրի Բանկ» ՓԲԸ քարտապաններ
Այլ դրույթներ	Սույն կանոնները ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել վարչության 06.12.2018թ. թիվ 554-Լ որոշմամբ հաստատված «Վճարային քարտերի սպասարկման կանոնների վերաբերյալ» Հրահանգը
Առնչվող փաստաթղթեր	Վճարային քարտերի թողարկման և սպասարկման ընթացակարգ ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 102-ն որոշում «Բանկերի ներքին հսկողության հրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու մասին



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ.....	3
ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	3
ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
ԳԼՈՒԽ 4. ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ.....	6
ԳԼՈՒԽ 5. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ.....	7
ԳԼՈՒԽ 6. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ԱՆՀՊՈՒՄ (CONTACTLESS) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ.....	9
ԳԼՈՒԽ 7. ՔԱՐՏԻ ԿՈՐՍՏԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	9
ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ.....	10
ԳԼՈՒԽ 9. ՔԱՐՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ.....	11
ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	16
ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ.....	17
ԳԼՈՒԽ 12. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ.....	18
ԳԼՈՒԽ 13. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ.....	19
ԳԼՈՒԽ 14. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ.....	20
ԳԼՈՒԽ 15. ՔԱՐՏԻ ՓԱԿՈՒՄԸ.....	21



ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել Բանկի կողմից վճարային քարտի թողարկման, տրամադրման և սպասարկման հետ կապված Բանկի և Քարտապանի միջև փոխհարաբերությունների հիմնական պայմանները և քարտի օգտագործման կանոնները (այսուհետ՝ Կանոններ)՝ համաձայն Բանկի ներքին իրավական ակտերի և վճարահաշվարկային համակարգերի (ԱրՔա, Visa, MasterCard) կանոնների:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն Կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

- 1) **Բանկ**՝ «Այդի բանկ» ՓԲԸ,
- 2) **Քարտ**՝ Բանկի սեփականությունը հանդիսացող վճարային քարտ, որը տրամադրվում է քարտապանին իր քարտային հաշվից կանխիկ միջոցներ ստանալու և անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով,
- 3) **Քարտապան**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ով Բանկի հետ կնքել է Քարտի թողարկման և սպասարկման համար գրավոր պայմանագիր,
- 4) **Քարտային հաշիվ**՝ Քարտապանի և Բանկի միջև կնքված պայմանագրի հիման վրա Քարտապանի անունով բացված բանկային հաշիվ, որն օգտագործվում է Քարտով կամ դրա վավերապայմանների օգտագործմամբ գործարքներ իրականացնելու համար,
- 5) **Հավելյալ քարտ**՝ հիմնական քարտին կից տրամադրված Քարտ, որը տրվում է հիմնական Քարտապանի դիմումի համաձայն իր կամ երրորդ անձի անունով, և նախատեսված է հիմնական քարտային հաշվին առկա միջոցներով գործարքներ կատարելու համար,
- 6) **Պին ծածկագիր**՝ ծածկագիր, որը նախատեսված է Քարտապանի նույնականացման համար Քարտով գործարքներ կատարելիս՝ համաձայն քարտային վճարահաշվարկային համակարգերի կանոնների,
- 7) **Գաղտնաբառ**՝ Քարտապանի կողմից Բանկին տրամադրված ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից հեռախոսազանգի միջոցով Քարտի և Քարտային հաշվի վերաբերյալ տեղեկատվության ստացման, ԱրՔա առցանց վճարային համակարգում վիրտուալ քարտ ստեղծելու համար, ինչպես նաև Բանկի և ԱրՔա վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված այլ դեպքերում,



- 8) **CVV/CVC կոդ**՝ Քարտի դարձերեսին նշված և Քարտապանին նույնականացնող եռանիշ կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից առցանց վճարումներ կատարելիս,
- 9) **Առևտրի/սպասարկման կետ**՝ ապրանքների վաճառքի և/կամ ծառայությունների մատուցման կետ, այդ թվում՝ առցանց միջավայրում, որտեղ հնարավոր է վճարում իրականացնել Քարտի միջոցով,
- 10) **ԱԳՄ**՝ ավտոմատ գանձման մեքենա (ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքավորման տեսակ), որի օգնությամբ Քարտով հնարավոր է իրականացնել կանխիկ և անկանխիկ գործարքներ,
- 11) **POS տերմինալ**՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է Առևտրի/սպասարկման կետում անկանխիկ վճարում կամ բանկի տարածքում վճարային քարտով կանխիկացում իրականացնելու համար,
- 12) **Գործարք**՝ Քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ կատարված գործառնություն,
- 13) **Հավաստագրում**՝ Քարտով գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում,
- 14) **Գործարքի կատարման օր**՝ Քարտով գործարքը կատարելու փաստացի օր,
- 15) **Գործարքի հաշվանցման օր**՝ Բանկի կողմից Քարտով կատարված գործարքը քարտային հաշվով հաշվանցելու օր,
- 16) **Քաղվածք**՝ Քարտային հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ Բանկի կողմից Քարտապանին տրամադրվող հաշվետվություն,
- 17) **Դեբիտորական պարտավորություն**՝ Քարտային հաշվին օգտագործման համար բավարար հասանելի մնացորդից (այդ թվում՝ վարկային միջոցներից) ավել օգտագործված գումար, որն առաջացնում է քարտային հաշվին դեբիտորական պարտք և ենթակա է մարման հաճախորդի կողմից,
- 18) **Չնվազող մնացորդ**՝ Բանկի սակագներով սահմանվող քարտային հաշվի մնացորդ, որի օգտագործման վրա դրված է սահմանափակում,
- 19) **Բանկի սակագներ**՝ Բանկի ներքին իրավական ակտերով ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար հաստատված սակագներ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Հաճախորդը Քարտ պատվիրելու նպատակով կարող է դիմել Բանկ՝ ներկայացնելով Բանկի կողմից սահմանված ձևանմուշի Քարտի տրամադրման դիմում (այսուհետ՝ Դիմում), որով հաճախորդը նաև հաստատում է Կանոնների ընդունումը:



4. Քարտապանի կողմից կարող են փոփոխվել Դիմումի մեջ նշված Քարտապանի անհատական տվյալները, Քարտի սահմանաչափերը, ինչը կատարվում է Բանկի սահմանած ձևանմուշով դիմումի ներկայացման միջոցով: Այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչ այդ նույնանման հարցին վերաբերող հանձնարարականները համարվում են ուժը կորցրած:

5. Սույն Կանոններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Բանկի սակագներով, Բանկի և Քարտապանի միջև պայմանագրային հարաբերություններ սահմանող փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով:

6. Բանկի կողմից առաջարկվող այլ քարտային պրոդուկտների, համատեղ քարտերի կամ այլ ծրագրերի համար Բանկի կողմից սահմանված առանձին պայմանները, սակագները և/կամ պայմանագրերը գործում են ի լրումն սույն Կանոնների, և դրանցում կարող են սահմանվել սույն Կանոններից տարբեր պայմաններ և/կամ սահմանափակումներ:

7. Քարտի օգտագործման ընթացքում կատարվող բոլոր գործառնություններն իրականացվում են համաձայն սույն Կանոնների և ԱրՔա, Visa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված պայմանների և կանոնների:

8. Քարտի հետ մեկտեղ Բանկը Քարտապանի համար բացում և վարում է Քարտային հաշիվ, որը բացվում է հիմնական քարտապանի անունով: Ընդ որում Քարտային հաշիվը կարող է բացվել տվյալ քարտային պրոդուկտի համար Բանկի կողմից հաստատված սակագներով սահմանված արժույթներից որևէ մեկով:

9. Քարտապանն իր քարտը կարող է օգտագործել մինչև քարտի վրա նշված գործողության ժամկետի համապատասխան ամսվա վերջին օրը ներառյալ:

10. Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և ենթակա է վերադարձման Բանկ՝ դրա վավերականության ժամկետի ավարտի դեպքում կամ Բանկի պահանջով:

11. Արգելվում է Քարտն օգտագործել անօրինական նպատակներով:

12. Եթե քարտային գործարքները կատարվել են սույն Կանոնների դրույթների խախտումով, ինչպես նաև քարտի, «ՊԻՆ» ծածկագրի, Գաղտնաբառի, քարտի վրա նշված տեղեկատվության (քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործմամբ, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով, ապա նման դեպքում Քարտապանի կրած վնասների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

13. Քարտերի հետ կապված հարցերով կամ տեղեկատվության տրամադրման համար Քարտապանի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկի հետ կապ հաստատելու համար գործում են Բանկի՝ (+374 10) 593333 և/կամ (+374 60) 273333 և



ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի՝ (+374 10) 592222 շուրջօրյա սպասարկման հեռախոսահամարները:

14. Քարտի գործողության ժամկետի ավարտից հետո քարտը Բանկի կողմից վերաթողարկվում է Քարտապանի գրավոր (համապատասխան դիմումի ներկայացման) կամ բանավոր (հեռախոսազանգի միջոցով) կարգադրության հիման վրա՝ Բանկում այդ պահին գործող սակագների և պայմանների համաձայն:

15. Քարտի հետ միասին Բանկը Քարտապանին չի տրամադրում թղթային «ՊԻՆ» ծածկագիր: Քարտապանն իր «ՊԻՆ» ծածկագիրը ստեղծում է Բանկի ԱԳՄ-ի (կամ նման հնարավորություն ունեցող այլ բանկի ԱԳՄ-ի) միջոցով: Նոր «ՊԻՆ» ծածկագիր ստեղծելու համար Քարտապանը Քարտը տեղադրում է ԱԳՄ, սեղմում է «Քարտի ակտիվացում», որից հետո Քարտին կցված հեռախոսահամարին ստանում է մեկանգամյա մուտքագրման կոդ: Ստացված կոդը մուտքագրելուց հետո Քարտապահից պահանջվում է ստեղծել «ՊԻՆ» ծածկագիր, որի համար Քարտապանը պետք է 2 անգամ մուտքագրի Նոր Նույն «ՊԻՆ» ծածկագիրը:

16. Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել «ՊԻՆ» ծածկագիրը՝ համապատասխան հնարավորությամբ ԱԳՄ-ի միջոցով: «ՊԻՆ» ծածկագրի փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել Նախ գործող և ապա Նոր «ՊԻՆ» ծածկագրերը:

17. «ՊԻՆ» ծածկագիրը մոռանալու դեպքում Քարտապանը մոտենում է Բանկ և ներկայացնում գրավոր դիմում (Բանկում հաստատված ձևանմուշի) այն փոխարինելու համար՝ համաձայն Բանկի սակագների:

ԳԼՈՒԽ 4. ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

18. Քարտապանն իր կողմից Բանկի մասնաճյուղում կամ առցանց պատվիրված քարտը ստանում է փակ ծրարով Բանկի տարածքում կամ հաճախորդի կողմից նշված հասցե առաքման միջոցով, եթե Բանկի իրավական ակտերով այդ քարտատեսակի համար նախատեսված է նման ծառայություն: Ընդ որում, քարտը թողարկելուց հետո այն Քարտապանին տրամադրելու նպատակով Բանկի մեկ մասնաճյուղից մեկ այլ մասնաճյուղ Բանկի կողմից կամ ինկասացիայի միջոցով տեղափոխումը, ինչպես նաև միևնույն Քարտապանին Քարտը հանձնելը՝ Բանկում այն պահվում է փակ ծրարով:

19. Քարտը թողարկվում և Քարտապանին է տրամադրվում Քարտապանի կողմից քարտի պատվիրման հայտը Բանկ ներկայացնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի երևանյան որևէ մասնաճյուղի տարածքում տրամադրելու դեպքում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի՝ ՀՀ-ում գտնվող այլ մասնաճյուղերի տարածքում տրամադրելու դեպքում: Հաճախորդին Քարտը կարող է տրամադրվել ավելի կարճ ժամկետում (Բանկի ներքին իրավական ակտերի դրույթների համաձայն)՝ Բանկի սակագներով սահմանված վճարը կատարելուց հետո: Առցանց



պատվիրվող Քարտերի համար Բանկի ներքին իրավական ակտերով և (կամ) տեղեկատվական ամփոփագրերով կարող են սահմանվել այլ պայմաններ, որոնք գործում են ի լրումն սույն Կանոնների, և դրանցում կարող են սահմանվել սույն Կանոններից տարբեր պայմաններ և/կամ սահմանափակումներ:

20. Քարտապանը պետք է ստուգի ծրարի փակ և անվնաս լինելը, քարտի առկայությունը ծրարում, համապատասխանությունը քարտի պատվիրման հայտին, ինչպես նաև քարտի վրա նշված տվյալների (մասնավորապես անվան, ազգանվան) ճշտությունը: Անհամապատասխանությունների դեպքում Քարտապանը պետք է անմիջապես տեղեկացնի Բանկին:

21. Եթե Քարտապանը չի ներկայանում Բանկ, ստանալու իր կողմից պատվիրված քարտը, պատվիրման օրվանից (քարտի վերաթողարկման դեպքում համապատասխան ձևանմուշի դիմումի ներկայացման օրվանից) 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում, ապա Բանկն իրավասու է փակել Քարտապանի քարտն ու քարտային հաշիվը և ոչնչացնել քարտը:

22. Քարտն ավտոմատ կերպով ակտիվացվում է ԱԳՄ-ի միջոցով «ՊԻՆ» ծածկագիր ստեղծելու գործողություններն իրականացնելուց հետո:

23. Եթե Քարտը պատվիրվել է առցանց (օնլայն, մոբայլ բանկինգ և այլն), որը Քարտապանին հնարավորություն է ընձեռում տվյալ համակարգի միջոցով ակտիվացնելու Քարտը, ապա Քարտի ակտիվացումն իրականացվում է բացառապես Քարտապանի կողմից տվյալ համակարգի միջոցով:

ԳԼՈՒԽ 5. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

24. Քարտապանն իր քարտով կարող է իրականացնել կանխիկ ելք և/կամ մուտք, անկանխիկ վճարումներ (այդ թվում քարտից քարտ փոխանցում)՝ նման հնարավորություն ունեցող սարքավորումների միջոցով (ԱԳՄ, POS տերմինալ և այլն), Բանկի մասնաճյուղերում, եթե այլ սահմանափակումներ նախատեսված չեն Բանկի կողմից տվյալ քարտատեսակի համար սահմանված պայմաններով, սակագներով և/կամ պայմանագրերով: Անկանխիկ վճարումներ կարելի է նաև իրականացնել բանկերի հեռակառավարվող համակարգերի, ԱրՔա վճարային համակարգի կայքի միջոցով, առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ առցանց միջավայրում: ԱԳՄ-ներով հնարավոր է նաև օգտվել այլ ծառայություններից, ինչպիսիք են «ՊԻՆ» ծածկագրի փոփոխությունը, կենսաթոշակային քաղվածքի դիտումը և այլն:

25. Բանկի մասնաճյուղերում քարտին կանխիկ մուտքագրված գումարը, Բանկի որևէ հաշվից քարտին փոխանցումը, ինչպես նաև ԱԳՄ-ի կամ ԱրՔա վճարային համակարգի կայքի միջոցով կատարված քարտից քարտ փոխանցումը քարտի վրա



հասանելի է դառնում առավելագույնը 5 (հինգ) րոպեի ընթացքում (տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

26. Քարտով կատարված գործարքի գումարը քարտից ելքագրվում կամ մուտքագրվում է անմիջապես, իսկ քարտային հաշվում արտացոլվում է որպես կանոն ԱրՔա համակարգում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը, իսկ ԱրՔա համակարգից դուրս կատարված գործարքների դեպքում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում (ԱրՔա պրոցեսինգային կենտրոնում և/կամ Visa, MasterCard վճարային համակարգերում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում):

27. Սույն Կանոնների 26-րդ կետի իմաստով քարտով կատարված գործարքներ են հանդիսանում նաև քարտից քարտ փոխանցումները (թե՛ ելքային, թե՛ մուտքային): Վարկային գծի մարման նպատակով կատարված քարտից քարտ փոխանցումն անհրաժեշտ է իրականացնել առնվազն վարկային գծի մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում վարկային գիծը կարող է դիտարկվել որպես ժամկետանց:

28. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն հնարավոր վնասների համար, որոնք կարող են առաջանալ գումարը Քարտապանի քարտին ժամանակային խզումով կամ ուշացումով հասանելի դառնալու կամ ուշացումով ակտիվանալու համար: Մասնավորապես՝ տեխնիկական խնդիրների պատճառով, ինչպես նաև յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը գործարքների գումարները կարող են քարտին հասանելի դառնալ սահմանված ժամկետներից ավելի ուշ:

29. Քարտով կանխիկի ստացման օրական գործարքների առավելագույն գումարը և քանակը սահմանվում են Բանկի սակագներով: Սահմանված սահմանաչափը գերազանցող չափով գումարի կանխիկացման համար անհրաժեշտ է Բանկ ներկայացնել համապատասխան դիմում: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Բանկն իրավասու է սահմանել նաև այլ տեսակի գործարքների գումարային և քանակային սահմանափակումներ՝ դրա վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրելով Բանկի կայքէջում:

30. ՀՀ բանկերի ԱԳՄ-ների միջոցով կանխիկի ելքագրման մեկ գործարքի գումարը չի կարող գերազանցել 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

31. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Քարտով գործարքների իրականացումը (Քարտի բլոկավորում), եթե Բանկն ունի տեղեկատվություն կամ կասկածներ Քարտով կատարված գործարք(ներ)ի հնարավոր զեղծարար լինելու վերաբերյալ և/կամ Քարտապանն ունի Բանկի նկատմամբ չմարված պարտավորություններ:



32. Եթե Քարտը բլոկավորվել է, ապա այն հնարավոր է ապաբլոկավորել Քարտապանի կողմից դիմում ներկայացնելու միջոցով: Դիմումը կարող է ներկայացվել ինչպես Բանկում, այնպես ուղարկվել էլեկտրոնային փոստի միջոցով (միայն նախապես Բանկում գրանցված էլեկտրոնային փոստից) կամ Բանկի Յեռախոսազանգերի կենտրոն զանգահարելու և նույնականացում անցնելու միջոցով: Ապաբլոկավորում իրականացվում է դիմումը ստանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում: Բանկի նախաձեռնությամբ բլոկավորված Քարտը Բանկի կողմից ապաբլոկավորվում է, երբ վերանում է Քարտը բլոկավորելու հիմքը, այն վերանալուց հետո նույն աշխատանքային օրվա ընթացքում:

33. Քարտի բլոկավորման դեպքում չի դադարում Քարտի հետ կապված միջնորդավճարների հաշվարկը և գանձումը:

34. Քարտապանի Քարտով կատարված ցանկացած գործարք հանդիսանում է Քարտապանի պարտավորությունը:

ԳԼՈՒԽ 6. ՔԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՐՏՈՎ ԱՆՅՊՈՒՄ (CONTACTLESS) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

35. Բանկի կողմից թողարկվող որոշ Քարտեր ունեն անհպում գործարքներ իրականացնելու հնարավորություն:

36. Անհպում գործարքներ իրականացնելիս անհրաժեշտություն չկա, որպեսզի Քարտապանն իր Քարտը փոխանցի վճարումն ընդունող աշխատակցին: Այս դեպքում Քարտապանն ինքն է մոտեցնում Քարտը POS տերմինալին:

37. Անհրաժեշտ է իմանալ, որ մինչև 20,000 ՀՀ դրամ գումարի կամ դրան համարժեք արտարժույթի վճարումների ժամանակ գործարքի իրականացման համար ՊԻՆ ծածկագրի մուտքագրում կարող է չպահանջվել:

ԳԼՈՒԽ 7. ՔԱՐՏԻ ԿՈՐՍՏԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

38. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին կամ ԱրՔա պրոցեսինգային կենտրոնին՝ կապ հաստատելով Բանկի (+374 10) 593333 շուրջօրյա հեռախոսահամարով, ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի (+374 10) 592222 շուրջօրյա հեռախոսահամարով կամ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ՝ Բանկի աշխատանքային ժամերին:

39. Սույն Կանոնների 38-րդ կետով սահմանված դեպքերում Քարտապանից ստացված տեղեկատվության հիման վրա Բանկը բլոկավորում է Քարտը:



40. Քարտը բլոկավորելուց հետո Քարտապանը պարտավոր է ողջամիտ ժամկետում այդ մասին նաև գրավոր (այդ թվում Քարտապանի՝ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստից card@idbank.am հասցեին ուղարկված նամակի միջոցով) տեղեկացնել Բանկին: Պատշաճ տեղեկացման պահ է համարվում գրավոր տեղեկացման և համապատասխան դիմումի ներկայացման պահը: Դիմումը կարող է ներկայացվել Բանկի հեռակառավարման համակարգերի միջոցով՝ նման հնարավորության առկայության դեպքում:

41. Մինչ Բանկին պատշաճ կերպով տեղեկացնելը Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

42. Բանկին տեղեկացնելուց հետո Քարտով իրականացված հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ առցանց միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում Քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում (միջազգայնորեն գործող ցուցակ, որում ներառված քարտերի համար վճարահաշվարկային համակարգերի կանոններով նախատեսված է, որ գործարքները կատարվում են միայն հավաստագրման հիման վրա)՝ համաձայն Բանկի սակագների:

43. Քարտի կորստի, գողության, դրանով կատարված զեղծարարության (այդ թվում կասկածի առկայության) մասին Բանկին չտեղեկացնելու, ինչպես նաև մինչև Բանկին տեղեկացնելը երրորդ անձանց կողմից Քարտի օգտագործման հետևանքով Բանկի կրած ծախսերը, կորուստները և վնասները ենթակա են հատուցման Քարտապանի կողմից:

44. Երրորդ անձին Քարտի տվյալների հասանելի դառնալու կամ դրա կասկածի, ինչպես նաև Քարտի կորստի կամ գողության դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման Քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի Քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում Քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԳԱՆՁՎՈՂ ԿՃԱՐՆԵՐԸ

45. Քարտի սպասարկման հետ կապված Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարները ենթակա են վճարման Քարտապանի կողմից: Բանկի կողմից սահմանված միջնորդավճարները հրապարակվում են Բանկի կայքէջում համապատասխան տեղեկատվական ամփոփագրերում:



46. Քարտը պատվիրելիս Քարտապանը վճարում է սպասարկման միջնորդավճարն առաջին տարվա (կամ ամսվա) համար, իսկ հաջորդ վճարումները՝ Բանկի սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի ներքին իրավական ակտերով:

47. Քարտային գործարքների արդյունքում Քարտային հաշվին օգտագործման համար բավարար հասանելի մնացորդը գերազանցելու դեպքում Քարտային հաշվին ձևավորվում է դեբիտորական պարտավորություն, որը ենթակա է առաջնահերթ մարման: Բանկը Քարտապանից կարող է գանձել դեբիտորական պարտավորության տուժանք, եթե այդպիսին նախատեսված է տվյալ քարտատեսակի համար հրապարակված սակագներով:

48. Քարտի գծով առաջացած պարտավորությունները (միջնորդավճարները, դեբիտորական պարտավորությունը և այլ վճարները) Բանկն իրավունք ունի գանձել անակցեպտ կարգով՝ առանց Քարտապանի հանձնարարականի: Գանձումն առաջնահերթ կատարվում է քարտային հաշվից, իսկ քարտային հաշվին միջոցների բացակայության դեպքում՝ Քարտապանի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից: Ընդ որում Քարտապանը պարտավոր է ապահովել համապատասխան դրամական միջոցների առկայությունը իր բանկային հաշիվ(ներ)ին: Բանկն իրավունք ունի Քարտապանի Քարտային հաշվից անակցեպտ կարգով գանձել Բանկի նկատմամբ Քարտապանի այլ պարտավորությունները:

49. Չեղարկված գործարքի գումարը առևտրի/սպասարկման կետի կողմից վերադարձվելուց հետո Բանկը մուտքագրում է քարտային հաշվին՝ նվազեցնելով չեղարկման համար պահումները (առկայության դեպքում): Անկախ չեղարկված գործարքի գումարի վերադարձման հանգամանքից և ժամկետից՝ Քարտապանը պետք է Բանկին վճարի կատարված գործարքի արդյունքում Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

50. Առևտրի/սպասարկման կետի կողմից մատուցված որևէ ծառայության և/կամ վաճառված ապրանքի կամ այլ բանկի կանխիկի տրամադրման կետից գումարի կանխիկացման գործարքի դիմաց գանձված և Քարտապանի քարտային հաշվից ելքագրված հավելյալ վճարի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

51. Քարտի միջոցով Քարտապանին տրամադրված վարկի և/կամ վարկային գծի մարման կարգը և պայմանները, հաշվարկվող տարեկան անվանական և փաստացի տոկոսադրույքների, տոկոսագումարների հաշվարկման և Քարտապանի պարտավորությունների մարման ժամկետները, կարգն ու պայմանները սահմանվում է տվյալ վարկատեսակի համար Բանկի ներքին իրավական ակտով հաստատված սակագներով և պայմաններով:

ԳԼՈՒԽ 9. ՔԱՐՏՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ



52. Քարտապանը չպետք է փոխանցի Քարտը, հայտնի «ՊԻՆ» ծածկագիրը, գաղտնաբառն այլ անձանց: Քարտապանը պարտավոր է ձեռնարկել միջոցներ, որպեսզի քարտը, «ՊԻՆ» ծածկագիրը, գաղտնաբառը, Քարտի վրա նշված տեղեկատվությունը տեսանելի կամ այլ կերպ հասանելի չլինեն այլ անձանց: Նշված բոլոր տվյալների օգտագործման հետ կապված ամբողջ ռիսկը կրում է Քարտապանը:

53. Քարտապանի կողմից պետք է ստորագրված լինի Քարտի հակառակ կողմի վրա ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտը: Ստորագրության բացակայությունը կամ դրա անհամապատասխանությունը կարող է հիմք հանդիսանալ Քարտի սպասարկումը մերժելու և այն առգրավելու համար:

54. Չի թույլատրվում քարտը և «ՊԻՆ» ծածկագիրը պահպանել միասին:

55. Առցանց միջավայրում (վիրտուալ առևտրի կետերում) քարտով գործարքների իրականացման ժամանակ «ՊԻՆ» ծածկագրի մուտքագրում կամ հայտնում չի պահանջվում: Նման դեպքում անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել գործարքը, տեղեկացնել Բանկին և բլոկավորել Քարտը:

56. Քարտի ապօրինի օգտագործման կամ ապօրինի օգտագործման վտանգի մասին տեղեկություններ, կասկած ունենալու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին և բլոկավորել Քարտը:

57. Քարտը օգտագործելիս «ՊԻՆ» ծածկագիրն անհրաժեշտ է մուտքագրել այնպես, որ տեսանելի չլինի այլ անձանց և չտեսագրվի որևէ սարքի միջոցով:

58. Քարտապանը պետք է առավել ուշադիր լինի այն գործարքների մասով, որոնք իրականացվում են ժամանցի և նմանատիպ այլ վայրերում: Խորհուրդ է տրվում Քարտը չվստահել այլ անձանց և թույլ չտալ Քարտի օգտագործումը Քարտապանի տեսադաշտից դուրս:

59. Քարտապանը պետք է ուշադիր լինի, որպեսզի Քարտը չընթերցվի գործարքի իրականացման համար նախատեսված սարքերից բացի որևէ այլ սարքավորման օգնությամբ:

60. Խորհուրդ է չի տրվում օգտվել այն ԱԳՄ-ներից, առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև եթե դրանց Քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի տրամադրման պատուհանին ամրացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կաչոն ժապավեններ և այլ կասկածելի իրեր:

61. Վիրտուալ միջավայրում Քարտով գործարք կատարելիս Քարտապանը պետք է նախապատվություն տա ապահով վճարում/նախատեսող կայքերին (secure payments):

62. Գործարք կատարելիս «ՊԻՆ» ծածկագիրը հաջորդաբար 3 (երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում Քարտը կարող է բլոկավորվել և/կամ առգրավվել: Քարտը կարող է առգրավվել նաև ԱԳՄ-ից դուրս գալուց հետո 20 (քսան) վայրկյանի ընթացքում Քարտը



չվերցնելու դեպքում, ինչպես նաև ԱԳՄ-ի տեխնիկական խնդիրների և Քարտը վնասված լինելու պատճառով:

63. Եթե ԱԳՄ-ի միջոցով Քարտով գործարք կատարելիս Քարտը ԱԳՄ-ում առգրավվել է, և Քարտի առգրավման պատճառի մասին որևէ հաղորդագրություն չի արտացոլվում էկրանին կամ անդորրագրի վրա, Քարտապանը պետք է անմիջապես զանգահարի Բանկ և համոզվի, որ Քարտը բլոկավորվել է: Եթե Քարտը չի բլոկավորվել, անհրաժեշտ է անհապաղ բլոկավորել այն:

64. ԱԳՄ-ում առգրավված Քարտը ստանալու համար անհրաժեշտ է դիմել Բանկ: Բանկի ԱԳՄ-ում առգրավված Քարտը վերադարձվում է Քարտապանին Քարտի առգրավման օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է Երևան քաղաքում կամ ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղ և միաժամանակ Քարտապանը ցանկանում է Քարտը ստանալ նույն քաղաքում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է ՀՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկն ունի մասնաճյուղ, սակայն Քարտապանը ցանկանում է քարտը ստանալ Երևանյան որևէ մասնաճյուղից, 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, եթե ԱԳՄ-ն գտնվում է ՀՀ և ԼՂՀ այն քաղաքում կամ վայրում, որտեղ Բանկը չունի մասնաճյուղ: ՀՀ այլ բանկերի ԱԳՄ-ներում Քարտի առգրավման դեպքում Քարտը կարող է տրամադրվել Քարտապանին Բանկի կողմից այն ստանալու օրը կամ դրան հաջորդող այլ օր:

65. ԱԳՄ-ի, կանխիկացման, առևտրի/սպասարկման կետի կամ սարքավորման կողմից Քարտի սպասարկումը մերժելու կամ դրանց աշխատանքի խափանման հետևանքով Քարտապանին ուղղակի կամ անուղղակի հասցված վնասի համար Բանկը պատասխանատվություն չի կրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պատասխանատվությունն ուղղակի սահմանված է օրենքով, ինչպես նաև երբ միաժամանակ առկա է Բանկի մեղքը, և հաճախորդն այցելել է Բանկի որևէ մասնաճյուղ, սակայն վերջիններս չեն տրամադրել Քարտում առկա գումարը կամ պահանջվող մասը կանխիկ եղանակով: Ընդ որում, Բանկի պատասխանատվությունը սահմանափակվում է բացառապես Քարտապանին պատճառված իրական (ուղղակի) վնասի չափով:

66. Քարտապանի ցանկությամբ՝ Բանկը Քարտապանին ուղարկում է Քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրություն Բանկում գործող սակագների համաձայն:

67. SMS ծառայությունից օգտվելու նպատակով Քարտապանը պարտավոր է Բանկում լրացնել համապատասխան ձևանմուշի դիմում: Դիմումի մեջ նշված SMS հաղորդագրության ծառայության համար Բանկ ներկայացված բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Բանկին: Քարտապանի կողմից բջջային հեռախոսահամարի փոփոխության մասին Բանկին չտեղեկացնելու հետևանքով երրորդ անձանց



տեղեկատվության հասանելի դառնալը չի համարվում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության հրապարակում:

68. Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալիս Քարտապանը պետք է ստուգի գործարքի գումարը և կարգավիճակը (կատարված, մերժված և այլն): Քարտով կատարված գործարքի վերաբերյալ SMS հաղորդագրություն ստանալուց հետո գործարքի հետ համաձայն չլինելու դեպքում Քարտապանը կարող է տեղեկացնել այդ մասին Բանկին՝ անհրաժեշտության դեպքում բլոկավորելով Քարտը:

69. Վիրտուալ միջավայրում քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վճարային համակարգերի կողմից հաստատված տարբերանշաններին (Visa-ի դեպքում “Verified by Visa”, MasterCard-ի դեպքում “MasterCard Secure Code”, ԱրՔա-ի դեպքում “ArCa SecurePay”»): Նշված տարբերանշանները կող կայքերում գործարքներ կատարելու համար Քարտապանը պետք է մուտքագրի Բանկի կողմից յուրաքանչյուր անգամ գործարք կատարելիս տրամադրվող մեկանգամյա գաղտնաբառը, որը ստանում է Բանկին նախապես տրամադրված բջջային հեռախոսահամարին ուղարկվող SMS հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստին ուղարկվող նամակի միջոցով: Տեխնիկական կամ Բանկի գործունեությամբ չպայմանավորված որևէ պատճառով SMS հաղորդագրություն կամ էլեկտրոնային նամակ չստանալու և դրա արդյունքում գործարքը խափանվելու դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում:

70. Ստացված ծածկագիրը մուտքագրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մուտքագրման էջի հասցեին: Այլ հասցեով էջ նշված ծածկագիրը մուտքագրելն արգելվում է:

71. Ինտերնետային առևտուր իրականացնելիս խորհուրդ է տրվում վճարումները իրականացնել միայն անձնական համակարգչով կամ հեռախոսով՝ քարտային տվյալների գաղտնիությունը պահպանելու նպատակով:

72. Ինտերնետային խանութներում վճարում կատարելիս ցանկալի է օգտվել միայն այն կայքերից, որոնց հասցեն սկսվում է “https” -ով “http”-ի փոխարեն:

73. Քարտապանը պարտավոր է համոզվել, որ մուտք է գործել ճիշտ հասցեով կայք, քանի որ կարող են ստեղծվել նմատանիպ հասցեներով կեղծ կայքեր: Անձանոթ կայքից օգտվելու դեպքում անհրաժեշտ է նախօրոք ուսումնասիրել կայքի վերաբերյալ կարծիքները համացանցում, համոզվել, որ կայքն ունի ապրանքների/ծառայությունների մատուցման, առաքման, հետվերադարձի կանոններ, կոնտակտային տվյալներ հետադարձ կապի համար:

74. Ինտերնետային խանութներից գնումներ կամ այլ վճարումներ կատարելու համար ցանկալի է ունենալ առանձին Քարտ:



75. Քարտի օգտագործման անվտանգությունը բարձրացնելու նպատակով Բանկն իրավասու է միակողմանիորեն փոփոխել Քարտով գործարքների կատարման և/կամ հավաստման կարգը՝ գործարքի կատարման համար որպես պահանջ սահմանելով նույնականացնող ծածկագրերի (մեկանգամյա գաղտնաբառ և այլն) կիրառումը, որոնք կարող են Բանկի կողմից ուղարկվել Քարտապանի բջջային հեռախոսահամարին, էլեկտրոնային հասցեին կամ այլ միջոցներով:

76. Ելնելով անվտանգության նկատառումներից՝ Բանկն իրավասու է արգելել կամ սահմանափակել առավել ռիսկային երկրներում Քարտի կիրառմամբ գործարքների կատարումը, ինչպես նաև մերժել ցանկացած գործարք, որը Բանկի հայեցողությամբ կարող է համարվել ռիսկային: Նման դեպքերում Քարտապանը պետք է կապ հաստատի Բանկի հետ: Եթե Քարտապանը Բանկ ներկայացված գրավոր կամ գրանցված էլեկտրոնային փոստից ուղարկված դիմումի հիման վրա Բանկից ստանում է ռիսկային գործարքների իրականացման թույլտվություն, ապա հետագայում Քարտով կատարված նմանատիպ բոլոր գործարքների գծով պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

77. Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ կասեցնել Քարտի միջոցով տրամադրվող ծառայությունները, եթե հիմնավոր կասկածներ ունի Քարտով կատարված գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ: Ծառայությունների կասեցումը Բանկի կողմից վերացվում է գործարք(ներ)ի հավաստիության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը կամ բավարար պարզաբանումներ ստանալուց հետո:

78. Քարտի փակման դեպքում (վաղաժամկետ կամ քարտի գործողության ժամկետի ավարտից հետո) Քարտապանը պետք է Քարտը վերադարձնի Բանկ: Եթե ինչ-որ պատճառով Քարտապանը չի կարող վերադարձնել Քարտը, և այն գտնվում է իր մոտ, ապա Քարտապանը պետք է ոչնչացնի Քարտը՝ կտրելով մասերի մազնիսական երիզի և միկրոպրոցեսորի (չիպի) երկայնքով: Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտը չվերադարձնելու հետևանքով Քարտով իրականացված գործարքների համար:

79. Արգելվում է Քարտի նույնականացման տվյալները (Քարտի համարը՝ ամբողջությամբ, գործողության ժամկետ, CVV կոդ, սույն Կանոնների 69-րդ կետում նշված անվտանգության ծածկագիր, «ՊԻՆ» ծածկագիր) հայտնել երրորդ անձանց, այդ թվում նաև Բանկի աշխատակիցներին, հեռախոսացանգի, էլեկտրոնային փոստին եկած հաղորդագրության կամ սոցիալական ցանցերով ստացված նամակների միջոցով: Նման արտահոսքի դեպքում Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

80. ԱԳՄ-ով կամ առևտրի/սպասարկման կետում գործարք իրականացնելիս «ՊԻՆ» ծածկագիրը անհրաժեշտ է մուտքագրել՝ այլ անձանց կամ տեղադրված սարքերի համար անտեսանելի եղանակով, ծածկելով այն ձեռքով:



81. Արգելվում է գործադրել ֆիզիկական ուժ Քարտը ԱԳՄ տեղադրելիս: Նման խնդրի դեպքում անհրաժեշտ է հնարավորության դեպքում զգուշացնել ԱԳՄ սպասարկող բանկին և օգտվել այլ ԱԳՄ-ից:

ԳԼՈՒԽ 10. ԲԱՆԿԻ ԵՎ ՔԱՐՏԱՊԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

82. Քարտապանն իրավունք ունի.

- 1) իր Քարտով կատարել կանխիկ և անկանխիկ գործարքներ Քարտի վճարային սահմանաչափի սահմաններում,
- 2) Բանկ ներկայացնել դիմումներ իր Քարտի սահմանաչափերի փոփոխման, Քարտի վերաթողարկման, քարտային գործարքի բողոքարկման նպատակով,
- 3) ստանալ քարտային հաշվի քաղվածքներ՝ տվյալ քարտատեսակի համար նախատեսված կարգով և պարբերականությամբ,
- 4) բաժանորդագրվել և ստանալ SMS հաղորդագրություններ Քարտով կատարված գործարքների համար:

83. Քարտապանը պարտավոր է.

- 1) Քարտի կորստի, գողանալու, այլ անձանց քարտային տվյալները հասանելի դառնալու դեպքում անհապաղ տեղեկացնել Բանկին՝ սույն Կանոններում նշված եղանակներով,
- 2) կատարել Քարտի և քարտային հաշվի սպասարկման հետ կապված տվյալ քարտատեսակի համար Բանկում գործող սակագներով սահմանված վճարները,
- 3) անվերապահորեն հետևել սույն Կանոններով սահմանված Քարտով իրականացվող գործարքների անվտանգության կանոններին:

84. Բանկն իրավունք ունի.

- 1) մերժել Քարտով գործարքների իրականացումը, եթե պահանջվող գումարը (ներառյալ գանձվող միջնորդավճարները) գերազանցում է Քարտի վճարային սահմանաչափը,
- 2) մերժել նոր Քարտի տրամադրման և/կամ գործող Քարտի վերաթողարկման ցանկացած դիմում՝ առանց Քարտապանին բացատրություններ տրամադրելու,
- 3) միակողմանի կարգով փոփոխել Քարտի տրամադրման և սպասարկման սակագները, սույն Կանոնները, ինչպես նաև Քարտի սպասարկման հետ կապված այլ վճարների չափերը: Ընդ որում սույն կետով նախատեսված սակագներն ու անհրաժեշտ այլ վճարների մեծությունները սահմանվում են Բանկի՝ Քարտերի տրամադրման և սպասարկման սակագների



տեղեկատվական ամփոփագրերով, որոնք հասանելի են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում www.idbank.am հասցեում: Սույն կետով նախատեսված սակագների և այլ անհրաժեշտ վճարների մեծությունների, ինչպես նաև սույն Կանոններում փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց 15 օր հետո:

85. Բանկը պարտավոր է.

- 1) պատշաճ կերպով ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն տեղական և միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված կանոնների և պայմանագրի,
- 2) Քարտապանին տրամադրել քաղվածք՝ նրա նախընտրած եղանակով, սույն Կանոնների 102-րդ կետի համաձայն,
- 3) Քարտի կորստի, գողության, զեղծարարության վերաբերյալ Քարտապանից և/կամ վճարային համակարգերից ծանուցում ստանալուն պես՝ կատարել վճարային քարտի գործողության կասեցում:

ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

86. Բանկը պատասխանատվություն է կրում Քարտապանի, Քարտի և գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության և Քարտապանի հետ կնքված քարտային պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) դրույթների:

87. Բանկը պատասխանատվություն չի կրում իր հսկողությունից դուրս տեղի ունեցած վիճահարույց իրավիճակների համար, որոնք կապված են իրեն կամ այլ բանկերին պատկանող սարքավորումների անսարքության կամ սպասարկման կետերի կողմից Քարտը սպասարկման չընդունելու հետ:

88. Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար ամբողջ պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

89. Եթե Քարտապանը պատշաճ կերպով տեղեկացրել է Բանկին իր Քարտի կորսված/գողացված լինելու վերաբերյալ, ապա այդ պահից հետո Քարտի անօրինական օգտագործմամբ օնլայն հավաստագրված գործարքների արդյունքում Քարտապանին պատճառված վնասների համար պատասխանատվությունը կրում է Բանկը, բացառությամբ առանց հավաստագրման (off-line) գործարքների:

90. Քարտապանը, ստանալով SMS տեղեկացումը իր Քարտով կատարված գործարքի վերաբերյալ, անհապաղ պետք է կապ հաստատի Բանկի հետ՝ այդ գործարքի իսկությունը ստուգելու և անհրաժեշտության դեպքում Քարտը վերաթողարկելու



Նպատակով: Նշված գործողությունները չկատարելու դեպքում Քարտով զեղծարարության/խարդախության կատարման ռիսկը և դրանից բխող ֆինանսական հետևանքը կրում է Քարտապանը:

91. Եթե Քարտապանն ակտիվացրել է SMS ծառայությունը, սակայն չի ստացել տեղեկացում Քարտով կատարվող գործարքների վերաբերյալ, ապա այդ գործարքների գծով զեղծարարության/խարդախության ռիսկը կրում է Բանկը, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վավերացված է Քարտապանի կողմից կամ վերջինիս կողմից գործարքի բողոքարկումը ենթակա է մերժման սույն Կանոնների և/կամ տեղական և միջազգային վճարահաշվարկային համակարգերի կանոնների համապատասխան, որոնց դեպքում կատարված գործարքների ֆինանսական հետևանքները կրում է Քարտապանը:

92. Սույն Կանոնների 90-րդ և 91-րդ կետերով սահմանված դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ Քարտապանին SMS հաղորդագրության միջոցով գործարքի վերաբերյալ ծանուցումը ժամանակին կամ ընդհանրապես չի տրամադրվել կապի խափանման կամ հեռահաղորդակցման օպերատորի մոտ ծագած տեխնիկական կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով:

93. Մինչև Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելը Քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը, բացառությամբ սույն կանոնների 91-րդ կետով նախատեսված դեպքերի:

ԳԼՈՒԽ 12. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՐԿՈՒՄՆԵՐԸ

94. Եթե Քարտով կատարված գործարքի արժույթը տարբերվում է Քարտային հաշվի արժույթից, ապա կատարված գործարքների ձևակերպման ժամանակ գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի:

95. Արժույթային փոխարկումները տարանջատվում են երկու տարբեր փուլերի:

96. Փոխարկման առաջին փուլը ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի շրջանակներում իրականացված գործարքների համար կատարվում է գործարքի պահին, երբ գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի՝ հիմք ընդունելով գործարքի կատարման պահին ՀՀ ԿԲ կողմից իրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար՝ համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Բանկի պրոցեսինգային կենտրոնի խորհրդի նիստի որոշմամբ սահմանված տոկոսով:

97. ԱրՔա պրոցեսինգային կենտրոնի շրջանակներից դուրս իրականացված գործարքների համար, առաջին փուլով գործարքի գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝



վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով, որից հետո ԱՄՆ դոլարը փոխարկվում է Քարտի արժույթի՝ սույն Կանոնների 96-րդ կետում սահմանված փոխարժեքով:

98. Երկրորդ փուլով ԱրՔա վճարահաշվարկային համակարգի միջոցով կատարված գործարքի, ինչպես նաև Visa և MasterCard միջազգային վճարահաշվարկային համակարգերի միջոցով՝ ԱՄՆ դոլարով կատարված գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի՝ գործարքի հաշվանցման օրվա համար Բանկի կողմից հրապարակված քարտային փոխարժեքով:

99. Իսկ այն դեպքում, երբ Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի միջոցով կատարված գործարքի արժույթը տարբերվում է ԱՄՆ դոլարից, ապա կատարված գործարքի գումարը փոխարկվում է ԱՄՆ դոլարի՝ գործարքի հաշվանցման օրվան նախորդող օրվա համար Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով (ընդ որում՝ Visa համակարգի դեպքում գանձվում է նաև միջևորդավճար գործարքի գումարի 2 (երկու) տոկոսի չափով), այնուհետև գումարը փոխարկվում է Քարտի արժույթի՝ գործարքի հաշվանցման օրվան նախորդող օրվա համար Բանկի կողմից սահմանված քարտային փոխարժեքով:

100. Սույն Կանոնների 97-րդ և 99-րդ կետից բացառություն են կազմում այդ դեպքերը, երբ գործարքի և Քարտային հաշվի արժույթները համընկնում են: Այս դեպքում Քարտային հաշվում հաշվանցվող գումարը համապատասխանում է գործարքի գումարին:

101. Իրականացված գործարքների գումարների հաշվանցման ժամանակ կատարված արժույթային փոխարկումների արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

ԳԼՈՒԽ 13. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

102. Բանկը՝ մինչև հաշվետու ժամանակահատվածին հաջորդող ամսվա 15-ը, Քարտապանին է տրամադրում Քարտային հաշվի Քաղվածքներ, որտեղ արտացոլված են Քարտային հաշվին կցված բոլոր Քարտերով իրականացված գործարքները՝ ՀՀ օրենսդրությամբ և/կամ Քարտապանի հետ համաձայնեցված պարբերականությամբ և եղանակով, եթե առկա չէ այլ կարգավորում:

103. Քարտային հաշվի Քաղվածքը չի ներառում հավաստագրված կամ չհավաստագրված և դեռևս Բանկի կողմից Քարտային հաշվին չհաշվանցված գործարքները:



104. Քաղվածքում ներառված տեղեկատվության վերաբերյալ Քարտապանի կողմից ներկայացված առարկությունները Բանկը դիտարկում է ՀՀ օրենսդրությամբ, ԱրՔա, Visa և MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

105. Բանկը և Քարտապանն ընդունում են, որ Քարտապանին՝ Դիմումում նշված գրանցման/բնակության հասցեներով, էլեկտրոնային փոստով, հեռախոսով ուղարկված ծանուցումները համարվում են պատշաճ, անկախ այդ ծանուցումները ստանալու փաստից:

ԳԼՈՒԽ 14. ՔԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

106. Անմիջականորեն Քարտով կամ դրա վավերապայմանների կիրառմամբ իրականացված գործարքների վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում Քարտապանը կարող է սահմանված կարգով Բանկում լրացնել գործարքի բողոքարկման դիմում, եթե խնդիրն անմիջապես առևտրի/սպասարկման կետի հետ լուծելու բոլոր հնարավոր միջոցները սպառված են:

107. Քարտով կատարված գործարքի բողոքարկման դիմումը կարող է ներկայացվել ոչ ուշ, քան քաղվածքի ստացման ամսաթվից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում (Priority Pass քարտի դեպքում 15 օրվա ընթացքում): Դիմումի հետ անհրաժեշտ է ներկայացնել բողոքարկվող գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ տեղեկություններ կամ փաստաթղթեր:

108. Առևտրի/սպասարկման կետում իրականացված գործարքի բողոքարկումը չի հանդիսանում Բանկի նկատմամբ բողոքի կամ բողոք-պահանջի ներկայացում, և Բանկի դերակատարումը սահմանափակվում է համապատասխան խնդրի կարգավորմանը միջնորդությամբ և օժանդակությամբ:

109. Եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Քարտապանից կարող է գանձվել Բանկի սակագներով սահմանված վճար՝ տվյալ քարտատեսակի համար նման վճարի առկայության պարագայում:

110. Քարտապանի կողմից ներկայացված բողոքարկման դիմումի վերջնական արդյունքի վերաբերյալ տեղեկատվությունը Քարտապանին տրամադրում է ԱրՔա, Visa, MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից բողոքարկման գործընթացների համար սահմանված ժամկետներում, իսկ եթե գործարքը կատարվել է Բանկի ԱԳՄ-ով կամ առևտրի/սպասարկման կետում, ապա դիմումի ստացման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:



111. Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կողմից Քարտով կատարված գործարքների համար, սակայն պատրաստ է հնարավորության սահմաններում օժանդակել Քարտապանի կողմից ներկայացված խնդրի կարգավորմանը: Խնդիրը չկարգավորվելու դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

ԳԼՈՒԽ 15. ՔԱՐՏԻ ՓԱԿՈՒՄԸ

112. Բանկն իրավասու է սույն Կանոններով և Բանկի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով միակողմանիորեն փակել Քարտը և Քարտային հաշիվը, եթե Քարտապանը Բանկի նկատմամբ ունի Քարտի գծով և/կամ այլ չմարված պարտավորություններ, Քարտապանի մահվան, սնանկության դեպքերում այդպիսի փաստերի մասին պատշաճ/հիմնավոր ծանուցման հիման վրա:

113. Քարտը փակելիս փակվում են նաև այդ Քարտի բոլոր հավելյալ քարտերը, որոնք ենթակա են վերադարձման Բանկ:

114. Բանկի նախաձեռնությամբ Քարտը փակելու դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից մարել Քարտի հետ կապված Բանկի նկատմամբ բոլոր պարտավորությունները:

115. Քարտապանը կարող է միակողմանիորեն դադարեցնել Քարտի գործողությունը և փակել Քարտն ու Քարտային հաշիվը՝ Բանկ ներկայացնելով համապատասխան փակման դիմում և ամբողջությամբ մարելով Քարտի հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորությունները:

116. Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում:

117. Քարտի փակումը չի դադարեցնում Քարտի հետ կապված Քարտապանի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները՝ ներառյալ հաշվարկված տոկոսները և տուժանքները:

118. Քարտապանը պարտավոր է մարել նաև Քարտով կատարված այն գործարքների արդյունքում ձևավորված պարտավորությունները, որոնք կատարվել են նախքան Քարտի փակումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել Քարտի փակումից հետո:

